Արծուի Բախչինեան, *Հայերը Համաշխարհային Պարարուեստում*, Երեւան, «Գրական Հայրենիք» ՓԲԸ («Հայաստան» Հրատ.), 2016, 316 էջ:

Ներկայացուող աշխատութիւնը պատմաբանասէր, գեղարուեստագէտ Արծուի Բախչինեանի բազմամեայ պրպտումների եւ նրանց ամբողջացման արդիւնքն է: Հեղինակը, սկսած 1991ից, Հայաստանի, Սփիւռքի եւ Մոսկուայի մամուլում պարբերաբար հանդէս է եկել պարարուեստի (մասնաւորապէս՝ հայ գործիչների) մասին հայերէն, անգլերէն եւ ռուսերէն յօդուածներով, գրախօսականներով, հայ պարողների հետ հարցազրոյցներով: Այդ բոլորը դարձել են սոյն աշխատութեան ատաղձը: Փաստօրէն, կրթութեամբ բանասէր Բախչինեանն արդէն շուրջ քառորդ դար զբաղւում է նաեւ բալէտի եւ շարժանկարի խնդիրներով[1], յատկապէս՝ հայ իրականութեան մէջ արուեստի այդ ճիւղերի նախապատմութեան եւ համաշխարհային բալէտում ու կինոյում հայերի մասնակցութեան ուսումնասիրութեամբ[2]: Տարիների ընթացքում նա հետազօտել է լուրջ պարագիտական գրականութիւն, եւ ընկալելով երեւոյթի գիտական լուրջ հետազօտութեան սկզբունքները՝ իր լեզուփմացութեամբ, քիչ յայտնի կամ անյայտ փաստեր եւ իրողութիւններ փնտռելու եւ լուսաբանելու հակումով կարողացել է ստեղծել պատմական, կենսագրական եւ արուեստագիտական հարուստ եւ ուշագրաւ ուսումնասիրութիւն:

Մինչ այս աշխատութիւնը Բախչինեանը հրատարակել է պարարուեստին առնչուող երկու հատոր՝ *Շամախեցի Պարուհին. Արմէն Օհանեանի Կեանքը եւ Ստեղծագործութիւնը* (2007, համահեղինակ՝ Վարդան Մատթէոսեան) ուսումնասիրութիւնը եւ «*Մենք Պարից Չենք Յագենում...*». *Պատմում են Նորայր եւ Արսէն Մեհրաբեանները* (2016) գրքոյկը:

Գրախօսուող աշխատութիւնն ընդգրկում է տեղեկատուութիւն 740ից աւելի հայ եւ հայազգի գործիչների մասին, որոնք եղել են բալէտի, արդի, ժողովրդաբեմական, էստրադային եւ, այսպէս կոչուած, «արեւելեան պարի» գործիչներ՝ պարող-պարուհիներ, պարուսոյցներ, պարաստեղծներ, նկարիչներ, պարագէտներ եւ պարային գործի կազմակերպիչներ: Գրքում ներկայացուած գործիչներից ոմանք ծանրակշիռ ներդրում ունեն թէ՛ հայ եւ թէ՛ միջազգային պարարուեստում՝ լինելով տարբեր ազգերի պարային դպրոցի կամ պարի այլեւայլ ուղղութիւնների հիմնադիրներ եւ զարգացնողներ: Թէկուզ հակիրճ ներկայացուած են նաեւ մեծ նուաճումների չհասած պարողները (օրինակ, խմբապարային արուեստագէտները):

Շատ լայն է պարային հայ գործիչների «աշխարհագրութիւնը». նրանք ստեղծագործել են աշխարհի ամենատարբեր երկրներում, մինչեւ անգամ՝ Աւստրալիա, Չիլի, Բրազիլիա, Չինաստան, Հոնկոնգ, Ճապոնիա...

Հեղինակը բացայայտում եւ ցոյց է տալիս, որ գրեթէ ամէն տեղ պարարուեստում հայերը փոքր թէ մեծ ներդրում ունեն:

Գրքում ընդգրկուած գործիչների որոշ մասը հայ է մօր կողմից (Թամարա Թումանովա, Թամարա Չինարովա, Միշէլ Հալլէ Եղիայեան, Գրետա Հոջքինսոն, Սիւզաննա Մելիքեան, Օլգա Վորոբիովա եւն.): Նման անձանց անդրադառնալը միանգամայն արդարացուած է: Աւելի բարդ է որեւէ անձի ազգային պատկանելիութիւնը հաստատող ապացոյցները յայտնաբերելը: Այս հարցում Բախչինեանը զգուշ է եւ նրբանկատ: Միքանի գործիչների ազգային պատկանելութիւնը հաստատող նրա բերած ապացոյցները յենւում են լուրջ փաստական եւ ստուգաբանական յենքի վրայ: Որոշ դէպքերում նա հանգամանօրէն քննարկում է անձի ազգային պատկանելիութիւնը. օրինակ՝ մեծանուն Ագրիպինա Վագանովային հայազգի համարելու դէպքում: Այս հարցի շուրջ հեղինակը բերել է թեր եւ դէմ փաստարկներ եւ, այնուամենայնիւ, չի յանգել վերջնական եզրակացութեան:

Գրքի ամենակարեւոր արժանիքը Բախչինեանի՝ պարարուեստում հայ եւ հայազգի ներկայացուցիչների ներդրման ուսումնասիրութիւնն է, որը չափազանց ընդլայնում է մեր գիտելիքները թէ՛ հայ բալէտի ձեւաւորմանը նախորդող ժամանակաշրջանի եւ թէ՛ հայ պարարուեստի մասին: Ինչպէս իրաւամբ նկատել է հեղինակը՝ «*Գրել «Հայերը համաշխարհային պարարուեստում»՝ նոյնն է, ինչ մասամբ գրել հայ պարարուեստի եւ բալէտի պատմութիւնը, քանի որ.... աշխարհի տարբեր երկրների հայազգի պարողներ (յատկապէս բալէտի) իրենց գործունէութեան նախնական շրջանում որոշ ժամանակ հանդէս են եկել նաեւ Հայաստանում*» (էջ 15): Միւս կողմից, աշխատութիւնը լրացնում եւ ամբողջացնում է մինչեւ 1920 արեւելահայ եւ արեւմտահայ, ինչպէս նաեւ սփիւռքահայ իրականութեան մէջ ցայժմ քիչ ուսումնասիրուած կամ չհետազօտուած պարարուեստի պատմութեանը վերաբերող մշակութաբանական հետազօտութիւնները: Այս նպատակին են ծառայում գրքի բոլոր վեց գլուխները, յատկապէս՝ առաջին երեքը:

Աշխատութիւնը կազմուած է ներածութիւնից, վեց գլխից, վերջաբանից, անգլերէն ամփոփումից եւ անուանացանկից:

Ա. գլուխը՝ «Ակունքներում (Պարարուեստի Առաջին Հայազգի Գործիչները)», ներկայացնում է թատերապարի առաջին հայազգի ներկայացուցչին՝ ԺԸ. դարավերջին գործած իտալահայ Դոմենիկո Սերպոսին, ինչը վկայում է, որ հայերի առնչութիւնը մասնագիտական պարարուեստի հետ շատ աւելի հին պատմութիւն ունի, քան բուն հայկական թատերապարը, առաջին հայ արուեստագէտներին, որոնք անմիջականօրէն առնչուել են թատերապարային արուեստին (Վարդգէս Սուրէնեանց, Ալեքսանդր Սպենդիարեան), բեմական պարի առաջին հայ եւ հայազգի ներկայացուցիչներին (Արմէն Օհանեան, Գէորգի Գուրջիեւ,

Նիկոլայ եւ Լիդիա Բեկտաբեկովներ, Եւգինէ Արիստակեան-Պոլիակինա եւ այլք):

Բ. գլուխը («Նախկին ԽՍՀՄ Հանրապետութիւններ») ենթագլուխներով անդրադառնում է Վրաստանի, Ադրբեջանի, Ռուսաստանի, Ուկրաինայի, Բելառուսի, Լատվիայի, Էստոնիայի, Ղազախստանի, Թուրքմէնստանի, Տաջիկստանի եւ Ուզբէկստանի բեմական պարի եւ բալէտի մէջ հայազգի գործիչների ներդրմանը: Փաստօրէն, հայազգիներ են կանգնած այդ երկրներից միքանիսի թատերապարային արուեստի հիմնադրման ակունքներում. Սերգէյ Կէորկովը՝ ադրբեջանական, Ելենա Տանգիեւա-Բիրզնիեցէն՝ լատվիական, Ալեքսանդր Ալեքսանդրովը՝ ղազախական: Նշանակալից է եղել հայերի ներդրումը միջինասիական ժողովուրդների ժողովրդական պարերի հաւաքման եւ նրանց բեմական արուեստի ստեղծման, մասնագիտական պարային թատրոնի ստեղծման մէջ (Թամարա Խանումը՝ ուզբէկական, Լիզա Խանումը՝ կարակալպակեան, Սերգէյ Բալասանեանը եւ Արուսեակ Իսլամովան՝ տաջիկական իրականութեան մէջ): Կարեւոր է տեսնել նաեւ, որ ռուսական թատերապարի երկու խոշոր կենտրոններում՝ Մոսկուայում եւ Լենինգրադում (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) հայերն ունեցել են այդ արուեստին նուիրուած ականաւոր գործիչներ, ինչպէս պարողներ (Եւգենի Կաչարով, Եւգենիա եւ Գէորգի Ֆարմանեանցներ, Միխայիլ եւ Քսենիա Տէր-Ստեպանովներ, Նինա Միրիմանովա, Ագնեսա Բալիեւա, Եուլիանա Մալխասեանց), այնպէս էլ պարադիրներ (Մաքսիմ Մարտիրոսեան, Գենադի Մալխասեանց):

Գ. գլուխը («Հայերը Եւ Ռուսական Բալէտն Արեւմուտքում») բացայայտում է 1920-2010ականներին Ռուսաստանից, ԽՍՀՄից եւ Հայաստանի Հանրապետութիւնից աշխարհի այլեւայլ երկրներ տեղափոխուած տասնեակ հայ եւ հայածնունդ պարուսոյցների եւ պարողների, որոնք որոշակի դեր են ունեցել ռուսական թատերապարի հարուստ աւանդների հանրահռչակման գործում: «1920–1930-ական թթ.» ենթագլուխը պատմական մի ակնարկ է ռուս տարագիր արուեստագէտների փաղանգին մաս կազմած հայազգի արուեստագէտների մասին, որոնց մէջ յիշարժան են յատկապէս վառ անհատականութեամբ օժտուած երեք ուսուցչուհիներ՝ Սեդա Սիւնին, Օլգա Տարասովան (ԱՄՆ) եւ Ռուզան Սարգսեանը (Ֆրանսիա), որոնց աշակերտել են թատերապարի ամերիկացի եւ եւրոպացի մի շարք ականաւոր արուեստագէտներ: Յատկապէս տպաւորիչ է վերջինի ստեղծագործական դիմանկարը՝ ժամանակակիցների, մասնաւորապէս իր աշակերտ, ֆրանսիացի մեծանուն պարաստեղծ Մորիս Բեժարի վկայութիւնների հիման վրայ: Սոյն գլխի Բ. ենթագլուխն է «Հայաստանից՝ Համաշխարհային Բալէտ», որը հայ թատերապարի պատմութեան մի մասն է կազմում, քանի որ ժամանակագրական կարգով ներկայացնում է

արտերկրում աշխատող թատերապարի հայ գործիչներին՝ չմոռանալով անդրադառնալ նաեւ նրանց հայաստանեան գործունէութեանը (Սոնա Վարդանեան, Ռուդոլֆ, Յակոբ եւ Սոնա Խառատեաններ, Ռաֆայէլ Անիկեան, Մաքս եւ Քրիստիան Ռաթեւոսեաններ, Գայիանէ եւ Յակոբ Յակոբեաններ, Միխայիլ Աւակով, Տատիանա եւ Մայտա Ղազարեաններ, Լիլիթ Յակոբեան, Աննա Յարութիւնեան ...): Այս շարքից Բախչինեանն առանձնացրել է վերջին քսանամեակին ասպարէզ իջած այր պարողներին Գ. գլխի Գ. ենթագլխում, որ վերնագրուած է «Հզօր Զգացմունքները» եւ Միջազգային Բալէտի Հայ Տղաները»: Սա հայ թատերապարային դպրոցի ակնառու երեւոյթներից է, երբ 1990ականների վերջից ասպարէզ իջած տասնեակ տաղանդաւոր հայ պատանիներ, աւարտելով Երեւանի Պարարուեստի Ուսումնարանը, մեծ յաջողութեամբ սկսեցին հանդէս գալ արտերկրում (Տիգրան Միքայէլեան, Արսէն Մեհրաբեան, Արման Գրիգորեան, Վահէ Մարտիրոսեան, Դաւիթ Կարապետեան, Արշակ Ղալումեան, Արման Զազեան, Դաւիթ Գալստեան, Աւետիք Կարապետեան, Էդգար Նիկոլեան, Ազատ Ղարիբեան, Դաւիթ Վարդանեան եւլլք.): Հեղինակը մասնաւորապէս անդրադառնում է նրանցից միքանիսի ստեղծած «Հզօր զգացմունքներ» թատերապարային խմբի ելոյթներին՝ լինելով դրանց մշտական հանդիսատեսը եւ արձագանգողը մամուլում:

Դ. գլուխը («Սփիւռքահայերը Միջազգային Պարարուեստում») ենթագլուխներով անդրադառնում է տարբեր սերունդների այն սփիւռքահայերին, որոնք այս կամ այն չափով մասնակցել են տարբեր երկրների միջազգային բեմական պարին: Այդ երկրներն են Մ. Նահանգները, որտեղ 1920ականներից գործել եւ մինչ օրս գործում են պարարուեստի նուիրեալ հարիւրաւոր հայորդիներ (Վիրջինիա Թուրիկեան, Գարուն Թութիկեան, Օնիկ Սահակեան, Բոբ Աւեան, Այիդա Ամիրխանեան, Աննա Ջանբազեան, յատկապէս մանրամասն տրուած է ֆլամենկօ պարերի երբեմնի աստղ Ադրինա Օթերօ Փանոսեանի ստեղծագործական դիմանկարը), Ֆրանսիան՝ (Ալիս Գաւուքճեան, Լիւտիս դէ Լիւզ, Կորին Թաշճեան), եւրոպական եւ ամերիկեան այլ երկրներ (ինչպէս, Սերբիան, որի թատերապարի կենտրոնական դէմքը Ի. դարավերջ-ԻԱ. դարասկզբին եղել է արցախեան արմատներով պարուհի Աշխէն Աթալեանցը): Մոռացուած չեն նաեւ թատերապարին առնչուած այլ մասնագիտութիւնների տէր արուեստագէտներ՝ երգահան Ալան Յովհաննէսը (Մ. Նահանգներ), նկարիչներ Ժան Գառզուն (Ֆրանսիա), Ռուբէն Տէր-Յարութիւնեանը (Մ. Նահանգներ), զգեստաստեղծ Հելէն Պոնսը (Մ. Նահանգներ) եւ այլք: Յատկապէս հետաքրքրական է Դ. ենթագլուխը՝ «Արեւելքի Երկրները», որտեղ ներկայացուած է հայ արուեստագէտի՝ պարարուեստի ռահվիրա լինելը Թուրքիայում (Լիդիա Արզումանեան, Եւգենիա Նանասով), Իրանում (Սարգիս Ջանբազեան, Ելենա Աւետիսեան), Լիբանանում (Անի Դաբա), Յորդանանում (Մանուկ

Սաթամեան): Հայազգի պարող-պարուհիների աշխարհագրութիւնը հասել է նաեւ հայկական մեծ համայնքներ չունեցող այնպիսի երկրներ, ինչպիսիք են Հնդկաստանը եւ Թայլանդը (ըստ գրքի, ժամանակին Բանգկոկի լաւագոյն պարուհին համարուել է Մարօ Գալստանեանը):

Ե. գլուխը՝ «Հայերը Էստրադային Պարարուեստում», ընթերցողին ծանօթացնում է 1930ականներից մինչ օրս այն հայազգի պարողներին, որոնք աշխարհի տարբեր երկրներում հանդէս են եկել, պայմանականօրէն ասած, էստրադային պարարուեստում "թեթեւ ժանրի (ջազ, փոփ) եւ սպորտային պարերով": Հետաքրքրական է նկատել, որ տարբեր երկրներում աշխատող հայ պարողներին յատկապէս հոգեհարազատ են լատինամերիկեան պարերը:

Վերջին՝ Զ. գլուխն է «Արեւելեան Պարը Եւ Հայուհիները»: Այն սկսում է խնդրի վերաբերեալ պատմական ակնարկից. դեռեւս 1890ականներին որոշ հայ պարուհիներ կատարել են այսպէս կոչուած արեւելեան, հարեմական պարեր, ինչը ազգակիցները համարել են պախարակելի: Պարզւում է, որ արեւելեան պարի հանդէպ եւս անտարբեր չեն եղել տարբեր երկրներում ծնուած եւ ապրող հայուհիներ, որոնք մասնագիտացել են պարարուեստի այդ տեսակի մէջ՝ դառնալով անգերազանցելի արհեստավարժներ, ինչպէս՝ Վիկտորիա Խաչիկեանը (Թուրքիա), Հերմին Սանոսեանը, Ծովինար Գրիգորեանը (Եգիպտոս), Անահիտ Սոֆեանը (Մ.Նահանգներում պորտապարի հիմնադիրներից մէկը), Մադլէն Իսկանդարեանը (Բրազիլ) եւ այլք: Ու թէեւ գլուխը վերնագրուած է «Արեւելեան Պարը Եւ Հայուհիները», Բախչինեանը յիշել է նաեւ երկու տղամարդ գործչի՝ Գայ Չուքուրեանին (որն ունեցել է իր անուամբ պորտապար կատարող նուագախումբ) եւ պարող Թորգոմ Մովսէսեանին:

Շատ կարեւոր են եւ կողմնորոշիչ «Վերջաբան»ում տրուած յստակ, ուսումնասիրութիւնն ամբողջացնող եզրակացութիւնները: *Հայերը Համաշխարհային Պարարուեստում* գրքում Բախչինեանը տուել է պարարուեստի հայ եւ հայազգի բազում ներկայացուցիչների ինչպէս կենսագրութիւնները, այնպէս էլ նրանց արուեստագիտական կերպարը: Այս առումով անհրաժեշտ է նշել, որ Բախչինեանը տարիների ընթացքում դարձել է մասնագիտացուած պարագէտ, ընդ որում՝ բարձր մակարդակի, քանի որ նիւթը ներկայացուած է՝ ժամանակի եւ այսօրուայ հայ եւ այլալեզու գրականութեան (յատկապէս՝ հանրագիտարանների եւ յուշագրութիւնների), հանդէսների, պարբերական մամուլի եւ արխիւային հարուստ նիւթերի, ինչպէս նաեւ իրենց՝ պարարուեստի գործիչների հետ նամակագրութեան եւ անձնական հանդիպումների արդիւնքում ստացուած գրառումների հիման վրայ:

Յղումների համակարգը յստակ է, երբեմն գրաւում է գրքի էջի կէսը եւ աւելին, ինչը կրկին վկայում է, որ Բախչինեանը, իրօք, որպէս գիտնական բարեխիղճ է եւ պատասխանատու իր գործի հանդէպ: Նա յղումներ է

կատարել ամենատարբեր բնոյթի աղբիւրներից (երբեմն՝ բաւական անսպասելի)՝ լինի հայ պարողների մասին ֆիննական թերթի պարային քննադատի կարծիքը կամ իտալական թատերապարի աստղ Ռոբերտո Բոլլէի ինքնակենսագրութիւնից հատուած, ռուս գրողներ Անատոլի Ռիբակովի կամ Էդուարդ Լիմոնովի գրքերը եւն.: Բուն պարարուեստին վերաբերող տեղեկատուութիւնից բացի հայ ընթերցողը կարող է գտնել բազմաթիւ հետաքրքրաշարժ փաստեր եւ իրողութիւններ իր հայրենակիցների վերաբերեալ: Օրինակ, որ «նոր Աննա Պաւլովա» համարուած Էմէ Աբրահամովա-Շահպարոնեանը շփուել է աշխարհի մեծամեծների հետ, որ թատերապարի աշխարհահռչակ պարողներ Եկատերինա Մաքսիմովան, Միխայիլ Բարիշնիկովը, Ռոլան Պըտին, հոլիվուդեան աստղ Օդրի Հեփբըրնը եւ ուրիշներ ունեցել են թատերապարի հայազգի ուսուցչուհիներ, որ ֆրանսիական թատերապարային մանկավարժութեան ճանաչուած դէմքերից Նորա Կիսի մայրը՝ Թամարա Սարգսեանը, Ֆրանսիայում կանանց մէջ առաջիններից է վարել ինքնաշարժ, իսկ մեծանուն Ռուդոլֆ Նուրէեւն ունեցել է հայուհի պահապան հրեշտակ՝ ի դէմս սանֆրանսիսկօցի ռեստորանատէր Արմէն Բալիի...: Հայագիտական որոշակի հետաքրքրութիւն են ներկայացնում նաեւ հայ իրականութեան եւ մշակոյթի հետ օտար միջավայրերում գործած այդ գործիչների ունեցած հեռու եւ մօտ կապերի յիշատակութիւնները:

Հայ պարարուեստի երկու հիմնական ճիւղերից բանահիւսական պարից եւ բեմական պարից, առաւել հետազօտուած է առաջինը: Բեմական պարը, որի համակարգին է պատկանում նաեւ թատերապարը, այն, չնայած 1950ականներից մինչեւ մեր օրերը լոյս տեսած մի շարք գիտական հետազօտութիւններին, քիչ է լուսաբանուած: Բազմակողմանի եւ խորը ուսումնասիրման կարիք են զգում թէ՛ հայ թատերապարի պատմութիւնը, թէ՛ առանձին հայ եւ հայազգի պարող-պարուհիների, պարադիրների գործունէութեանը նուիրուած առանձին մենագրութիւնների հրատարակումը: Ուստիեւ Բախչինեանի *Հայերը Համաշխարհային Պարարուեստում* գիրքն անգնահատելի ներդրում է ոչ միայն հայ պարագիտութեան, այլեւ հայագիտութեան, սփիւռքագիտութեան ոլորտում:

Աւելացնենք նաեւ, որ սոյն հրատարակութեան հովանաւորն է լիբանանեան թատերապարի երբեմնի պարուհի Սոնա Փոլատեան Օրճանեանը (այժմ՝ Կանադա) ու նաեւ մաղթենք, որ գիրքը հրատարակուի նաեւ այլ լեզուներով:

ՆԱԶԵՆԻԿ ՍԱՐԳՍԵԱՆ
nazeniks@gmail.com

[1] Ըստ հեղինակի՝ *«Արուեստի այս երկու տեսակն էլ, ինչպէս պատմութեան, այնպէս էլ տեսութեան առումով, ունեն հետաքրքրական ընդհանրութիւններ: Թէ՛ բալէտը, թէ՛ կինօն ստեղծում են սցենարի հիման վրայ: Երկուսին էլ բնորոշ է ռիթմը: Դասական եւ ժամանակակից երաժշտութիւնը յաճախ է յաջողութեամբ «սպասարկում» դրանց. յատուկ գրուած բալէտային եւ կինոերաժշտութիւնից բացի համաշխարհային երաժշտութեան գանձարանի բազմաթիւ նմուշներ դառնում են նոր բալէտների եւ կինոֆիլմերի համար հիմք եւ իլիւստրացիոն նիւթ: Կարեւոր է նշել նաեւ, որ 20րդ դարի 60ական թուականները եղել են թէ՛ հայ կինոյի, թէ՛ հայ բալէտի վերելքի տարիները...»* (Արծուի Բախչինեան, *Հայերը Համաշխարհային Պարարուեստում*, Երեւան, «Գրական Հայրենիք» ՓԲԸ («Հայաստան» Հրատ.), 2016, էջ 11):

[2] Տե՛ս այս թեմայով նրա աշխատութիւնները՝ *Հայերը Համաշխարհային Կինոյում* (Երեւան, ԳԱԹ Հրատ., 2004): *Հայ Կինօ – 100* (2012, Երեւան). նաեւ՝ «Հայ Բալէտային Արուեստի Նախապատմութիւնից», *Պատմաբանասիրական Հանդէս*, հմր., 2, 2012, էջ 96-113: